## 10. ԱՆԴՈՆ

Ժամանակով կէլնի մեյ հարուստ մարթմ: Ինոր մեյ տղամ կէլնի: Հեչ աղչիկ պնն չունենա:

Տղեն կէրթնն վարժատուն: Վարժատուն էրթալու ժամանակին, տսվերկու ինգյեր կէլնեն, հմեն էլ ուտող-խմող մարթեր, էտա տղեն էլ նրետվե կուզեն խանել:

Էտա մարթեր կուգյնն, էտա աղի ճամբախ կպռնեն, կասեն. - Ամեն օր վարժատուն էրթալով ի՞նչ կխասկնաս:

Արե՛, էրթանքյ խետ մե:

Կասի. - Կուգյամ խե ծե պտտել, աման էսա չանթեն ի՞նչխ անեմ:

Էտա մարթեր կառնեն էտա չանթեն, կուտան մեկ դյուքյամ, տղեն կառնեն կէրթնն:

Մեյխաննն կէրթնն, քյեֆ շյումբյուշ, ուտել, խմել, չոր իրիկուն:

Տղեն կասի. - Ժամանայս էկավ: Ես կէրթնմ տուն:

Էն մարթեր կառնեն էտա տղին կուգյնն էն դյուքյան, չանթեն կուտան ինոր, տղեն կթողնի կէրթնն տուն: Էն մարթերն էլ կէրթնն ոտրենց գործին:

Էտա մարթեր տսվերկու օր էտա տղին կտանեն կփռացուցեն, կուտեն, կխմեն, առանց ինորից տաս փարա առնելու:

Տսվերկու օր որ թամամ կէլնի, կասեն. - Տղա՛, մենքյ տսվերկու ինգյեր ենքյ, ամենքս մեկ օր քեզի պատիվ արիցինքյ: Էսօր էլ պատիվ անելու սրեն քյոն ի, տյու պիտի մե պատիվ անես:

Կասի. - Եղբայրնե՛ր, կուղեմ ծե պատիվ անեմ, աման ես փարն չունեմ:

- Ընչի, քյո խոր փնրն շատ կա, խորդ մոտեն ուզի, պե՛:

Կասի. - Ես ի՞նչխ ուզեմ խորս մոտեն, զի սովրցուցեքյ:

Ընգրներաց ճեռչն կասի. - Իրիկուն կնա՛, ծեռդ տիր իրեսիդ նստի, խաց ուտելու ժամանակին՝ խաց մ՚ուտե: Որ քյո խեր կասի՝ տղաս, ընչի՞ խաց չես ուտե սաս՝ ես էսօր իմ վարժապետին խինգյ վոսկու քաֆիլ եմ էլե, որ առատուն տանեմ տամ, իմ վարժապետի պարտքից փոթուցեմ: Մոտս փնրն չկա՝ կմտածեմ:

- Տղա՛ս, մի մտածե, - կասի խերն, - առատուն քյե փնրն կուտամ, տար քո վարժապետի պարտքն տու:

Տղեն շատ կուրախնա, ուր խացն կուտի, կքնի:

Առավոտ խեր խինգյ ոսկի փնրն կոսոա, կասի. - Տղա՛ս, էսա խինգյ ոսկին տոտր քյո վարժապետի պարտք:

Տաս ոսկի էլ կոստա, կասի. - Էսա էլ մո քյե պախե, պետք էլնն գյախ ծախսե, չէլնի փնրի պայսոսթեն քյնշես:

Խերն ի կէլնի կէրթա ուր խանութ:

Տղեն էլ շատ կուրախնա. կառնի ոսկիքյ, ուր չանթեն, կէրթա ուր ճամբախ:

Կէրթա́ կես ճամբախ, ուր ինգյրներ էն դեն կայնած են:

- Է՛, - կասեն, - էկա՞ր տյու, պարև խազար պարեով:

Պատիկ ինգյերի չանթեն ծեռնեն կառնին, տանին կդնին դյուքյանմ, ուրենքյ կէլնեն տավերեքյ ինգյրով էլմ կէրթա́ն ոտել, խմել, պտտել, զա́վք ու սեֆային:

Էն տղի վարժապետ կէրթա́ շուկեն պտտելու. տղայի խեր կտիսնա, կասի. - Ընչի՞ էսա քանի օր ի տղեն չի գյա́ վարժատուն:

Կասի. - Ինչպե՞ս տղան չի գյա վարժատուն: Իրիկուն տուն մալուլ նստեր էր, խաց չէր ուտե, ասի՝ տղա, ընչի՞ խաց չես ուտե, ասաց՝ էսօր պարտքնտերն իկեր էր իմ վարժապետից փա́րա́ կուզեր, վարժապետին փա́րա́ չկեր, որ տեր, ես էլա́ քյաֆիլ, ասի առատուն պիրեմ կուտամ: Ընկըն ասաց: Ես էլ ինոր խինգյ ոսկի տվի, որ պիրի տա քյո պարտք: Տաս ոսկի էլ ավելի տվիցի; որ անփա́րա́ չմներ:

Վարժապետ կասի. - Չէ՛, նա́՛ զիգնից փա́րա ես ուզե, նա́՛ էլ էն զի փա́րա́ ի տվե: Տղեն էլ էսա տավէրկու օր ի վարժատուն չի իկե:

Խերն էնտեղ «ա՜խ»ըմ կքյաշի, կասի. - Է՜յ վախ, որ ընկոն ի. իմ տղեն ուրիշ ճա́մբխդանքյ կէրթա́:

Չոմ էր մարթ տուն կէրթա́, ուր սրտի ցավից կխիվնդնա:

Ինոր կնիկ կասի. - Մա՛րթ, էսօր ի՞նչ էղե քյե, ընչի քյեֆ չունես:

- Տղեն ուրիշ ճա́մբխդանքյ կէրթա́: Տաս-տսնխինգյ օր ի վարժատուն չի կնա́ցե:

Էն ասաց, չասաց, մեռավ խեր:

Մնա իրիկուն, տղեն ինգյրներաց մոտեն կզատվի, կուգյա́, կխասնի վեր տռան, կտիսնա, որ խեր մեռեր ի:

Կէրթա́ ներս, կտիսնա, որ մերն կուլա:

Մեր կասի. - Տղա՛, դե՞որ ես, խերդ մեռավ, տյու չես էրևա:

Իրեքյ օր վերճ մերն էլ կմեռնի: Տղեն կմնա մենակ:

Տղեն կասի՝ մերս էլ մեռավ, խերս էլ մեռավ, էսա լավ էլա́վ, կէրթա́մ խետ իմ ինգյրներաց:

Տղեն կսիրվի էն ավազակներաց խետ: Կուտի, կխմի, կպտտի խետկներ:

Տղեն ուր խոր էլա́ծ չէլա́ծ ապրանքյ վասիաթ, կարողութեն, արտ, ափ, հմեն կծախի, կուտի: Էլ պա́մ չի մնա, ինգյրներ կիմա́նա́ն, որ էտա տղեն էլ փա́րա́ չմնաց:

Տղեն էն կա́նղա́ր ճարահատ կէլնի, որ ուր ավելի սաքյոն, սահաթ, բասդոն էլ կտանի կծախի:

Ինգյրներ կտեսնան էտա պա́ն: Տղեն կէրթա́ տեսնա, որ ուր ինգյրներ նստեր են ուրենց խամար կուտեն, կխմեն:

Կէրթա́ կասի. - Պարեով ծե, ախպերնե՛ր:

Էն մեկ կվերցի կասի. - Հայդե՛յ, կուրիսի, շուն շան որդի, տյու մարթ չես, տյու որ լավ մարթ էլնիր, քյո խոր էլա́ծ-չէլա́ծ չիր ուտե, խմե մե պես մարթերաց խետ:

Տղեն էն տեղեն կթողնի կէրթա́ ուրենց տուն:

Իրեքյ օր կիշեր ցերեկյ աստված կկանչի, կուլա́, կմրմռա, կասի՝ աստված, իմ վիճակն ի՞նչ պիտի էլնի:

Էն իրիկուն կմթնի, սա́հա́թ իրեքյին դավրեշմ ճրաքյ ծեռ տռնեն ներս կմտնի:

- Պարեով քյե, - կասի, - տղա՛, ընչի կուլա́ս:

Կասի. - Ասպա օր ես չիլամ, վո՞վ լա, դա́վրեշ բաբա, իմ խերն շատ հարուստ էր,

ավազակներաց խետ կերա. խմա, սորա ընձի վռնդեցին. ինոր խամար կայներ եմ կուլամ. կմրմռամ, աստծուց մեյ ճարմ կուզեմ:

Դավրեշ կասի. - Եթե որ իմ խոսքով նստես-կայնես՝ շատ լավ կէլնես:

Խանի խոռ քյանիմ կոտուշ փարա կուտա:

Թուղթ կխանի ծոցեն, վերեն պսմ կգրի, կուտա էն տղին:

- Տղա՛, վաղ իրիկուն սահաթ իրեքին էս նամակ կառնես կէրթաս վալաթ կուլասին փերիյհներաց թակավոր կուզյա̈. ճրայհներով կընցնի, կբռռաս, կասես՝ թակավոր, իմ նամակ առ կարդա: Էն ժամանակին կուզյա̈ն նամակ քյո ծեռնեն կտանեն, տյու չես տիսնա վով կտանի, որ կուզյա̈ն քյե կխարցուցեն՝ ի՞նչ կուզես, ասա՝ մեկ Անդոն կուզեմ: Քյե կասեն՝ Անդոն ի՞նչ անես, տյու հարստութեն. ոսկի ուզի. ասա՝ չէ, մենայ մե խատ Անդոն տվեքյ զի:

Էն Անդոն որ կուտան քյեզի, աշխարքյի վերեն. ի՞նչ ուզես, քյեզի կպերի:

Ճրայն կընցնի, դա̈վրեշ կէրթա̈:

Տղեն էլ ուրախութնից չի քյնի: Մինչև առատուն կլիսնա, տղեն կէրթա̈ չարշի բազար կպտտի չում իրիկուն:

Իրիկուն կուզյա̈ տուն, դավրեշի տված փա̈րեով քիչմ խաց կպիրի, կնստի կուտի, չում սահաթ հինքյին: Իրեքյին կէլնի դավրեշի տված նամակն կառնի կէրթա̈ վա̈լա̈թ կուլասին կկայնի:

Դա̈վրեշի ասածի պես, էնդեհեն փերիյհներաց թակավորն կուզյա̈, մոմերով ճրայհներով:

Նամակ կպռնի ծեռ, կասի. - Թակավո՛ր, թակավո՛ր, իմ նամակ առ կարդա:

Մեկ էլ տեսավ, որ ուր նամակ ընցավ թակավորու ծեռ:

Ուր ծառաներաց կէորեոխկի, կասի. - Կնա̈ցեքյ էն մարթուն խարցուցեքյ խենքյ, ի՞նչ կուզի:

Մարթերն էկան, խարցուցին. - Ի՞նչ կուզես:

Կասի. - Ես ծեզնից կուզեմ մենակ Անդոն, էլ պա̈ն չեմ ուզե:

Ծառեքյ կէրթա̈ն թակավորուն կասեն. - Թակավոր ապրած, Անդոն կուզի:

Ծառեքյ կէրթա̈ն կասեն տղին. - Այ տղա՛, Անդոն ի՞նչ անես, հարստութե՛ն. ոսկի ուզի:

- Չէ՛, ես մենակ մեկ Անդոն կուզեմ:

Ճարահատ Անդոն կպիրեն, կասեն. - Առ քյե Անդոն:

Մեկ էլ տեսավ, նա̈՛ թակավոր, նա̈՛ ճրայն, նա̈՛ պա̈ն, հմեն կորիսավ: Մնաց ինքյ ուր Անդոն:

Տղեն կասի. - Անդոն, զիկ տար մեր տուն:

Մեյմ էլ տեսավ առանց քյելելու շոտ ուրենց տան մեչն ի:

Տղեն կասի. - Վայլա. էսա Անդոն աղեյ պա̈ն ի, ինչ ուզիմ կկատարի:

- Անդո՛ն, խաց պե:

Խաց իբեր. ճուկ նստավ էնտեղ:

Վարհասըլ ինչ որ ուր տան խամար՝ տեղ, ջյուլ. խալի. թա̈ր-թա̈խմ պետք էր ուզեց, իպե:

Ասաց. - Անդո՛ն:

Ասաց. - Հրամե՛:

- Մեկ տուն ոսկի պիտի լցես, ես առատուն էլնեմ, տիսնամ:

Ուր խացն կերավ, կահվեն խմավ, ուր աղոթքյն արաց. պառկավ քյնավ:

Առավոտ էլավ վեր, վլացվավ, ուր խացն կերավ:

Ասաց. - Անդո՛ն:

Ասաց. - Հրամե՛:

Ասաց. - Էն տեսակ զի խալավ պիրես, որ թակավորում էլ ընկում պըն չէլնի:

Տղեն խալվներ խագյավ. էլավ կնաց պտտելու: Ուր խին ինգյրներ ինոր տեսան.
- Վա՜յ, - ասին, - էկե՛քյ, տեսեքյ մեր ախպեր ի՞նչ տեսակ խալվներ ի խագյե:

Ինգյըն տղի իտև կնըցին:

Տղեն կնըց նստավ կազինոն:

Մեյխանաջուց ուտելիքյ. խմելիքյ իպե, նստավ էնղեն, ուր քյեֆին կաչկի:

Էն տսվերկու ինգյրներ կնացին, պարև տվին. ասին. - Պարև քյե, ախպե՛ր:

Տղեն ասաց. - Կուրսեքյ, շնե՛ր, կնացեքյ, տյուք վո՞վ եքյ, ո՞ր տեղեն իկեր եքյ, էլմ էնտեղ կնացեքյ:

Տղեն քյանիմ օր ընկում առպ-չառպ կերավ, խմավ, փռաց:

Մեկ իրիկուն նստավ ինքյն իրեն մտածեց, ասաց. - Անդո՛ն:

Ասաց. - Հրամե՛:

Ասաց. - Կնը. վազիրի աղչիկ, սադրազամի աղչիկ պե զի խամսր:

Անդոն էր՝ կնըց վըզիրի աղչիկ, սըդրըզըմի աղչիկ պիրեց տղի էօդի մեչ:

Էն տղեն խետ էն աղչկներաց կերավ խմավ, քյեֆ ուրախութեն արաց: Արշալույսին պառկավ քնելու. կանչեց Անդոնին, ասաց. - Անդո՛ն, աղչկներ տար մեյ մեկ ուր տեղ:

Չում վեցն ամիս, ամեն իրիկուն խետ էտա աղչկներաց կերավ, ուր քյեֆ քյըշեց:

Մնաց մեկ օր սըդրըզըմի կնիկ տեսավ, որ ուր աղչկան գյուհնոց կառճացեր ի:

Ասաց. - Աղչի՛կ, քյո գյուհնոց ընչի՞ կառճացեր ի:

Աղչիկն ասաց. - Մայրիկ. իմ գյուհնոց ընչի՞ պիտի կառճանա:

Մեր կորոխկի տատմեր կպիրի:

Տատմեր կաչկի տիսնա, որ աղչիյն տղով ի, կասի. - Խանմ. քյո աղչիյն տղով ի:

Մեր կասի. - Տատմե՛ր, կէլնի որ զիզնից կամչնա, տյու հարցում արա մոտեն, տե ո՞ր տղի խետն ի կուտի խմի, կնստի, կայնի: Պիրենքյ վեր ինոր փսակենքյ:

Աղչիյն տատմոր կպատմի, կասի. - Ասեմ քյեզի: Զի ինըն վըզիրի աղչկան, կիշեր կտանեն էօդիմ մեչ, էնտեղ մեյ շահել տղեմ կա, խե մե կուտի, կխմի, չուր լյուսյու տեխ, մե էլմ կպիրեն մեր տներ:

Մեր կասի. - Աղչի՛յ, էն տուն չե՞քյ կիտե որն ի. որն չի:

- Չէ՛, - կասի. - կիշեր մե կտանեն:

Մեր կէրթը վըզիրի կնգյըն կասի թե. - Իմ աղչկա գյլեոխ ընհա պըմ իկե:

Վըզիրի կնիյն էլ կասի. - Վալլա՛, իմ աղչկա գյլեոխն էլ ըտսհա պըմ իկե:

Զրհց տվին ուրենց իրկներաց: Վըզիր ինըն սըդրըզըմ էլան կիտնական մարթեր պերին, ժողով արեցին, խարցում արեցին, թե ի՞նչ մարթ ի, ո՞ր տեղն ի:

Դըմվրեշի մեյ կվերուցի կասի. - Էտա փերիական պըն ի, խարցուցելով էն չես կանա կնդնե:

Սըդրըզըմ կասի. - Ապա իտոր չարեն ի՞նչ ի:

Դըմվրեշ կասի. - Պերեքյ էն աղչկներաց. մեյ մկին մեյ խատ ճեռչ ջեռբն շինեքյկսամ ալյուր կամ քրեճ լցեքյ ինոնց ջեռբ. տակերն էլ ծակեքյ, կիշեր տանելու ժամանակին ալյուր կթափի: Առատուն շոտ կէլնեքյ կէրթաքյ կնդնեքյ որ տուն են տարե:

Իրիկուն աղչկներաց շեռբեր կշինեն, ալյուր կլցնեն, պառկեն, կքնեն:

Կիշեր ճարստի տղեն ի. ուր Անդոն կկանչի. կասի. - Հայդե՛. վա̈զիրի, ինա̈ն սադրազամի աղչիյ կուզեմ ըստեղ:

Անդոն կէրթա աղչկներ կպիրի. կտիսնա. որ ճամբախ սիվդակ պան ի թափե:

Անդոն խեղքյով կէլնի, կէրթա չում աղչկներաց տներ, տիսնա որ սիվդակ պան իննց տնից թափե. չում ուր տիրոչ տուն: Անդոն որ էտա կտիսնա, կէրթա ինչ կանդար ամբրներաց այլուր կա, աղ կա հմեն կխանի դյուս, կցրվի. կցվոտի, հմեն ճամխե վերեն էլ ոչ մի տեղ պան բալլյու չանե:

Առատուն կէլնեն վեր տեսնան, որ հմեն փողյհդեր այլուր ի. քրեճ ի:

Վազիր սա̈դրազամ էլմ ժողով կանեն ուրենց կիտնական մարթեր էլմ կպիրեն:

Դավրեշ կասի. - Եու ծե չասի՞, որ փերիական պա̈ն ի: Էսօր էլ էն ջեռբերաց մեչ կորեկ լցեքյ. կորեկ շատ շատ բալլյու չանա:

Կէլնեն աղչկներաց ջեռբեր կորեկ կլցեն, կպառկեցուցեն:

Հարստի տղեն էլմ կասի. - Անդո՛ն, կնա սադրազամի աղչիկ. վա̈զիրի աղչիկ պե ըստեղ:

Էլմ կէրթա պիրե: Անդոն կտիսնա, որ էօդի մեչ կորեկ ի թափե:

Աղչկներաց շեռբեր կաչքի տիսնա, որ կորեկ ի:

Կէլնի կէրթա փողյհդեր զմեն կորեկ. կտավատ, ցորեն փռ կանի:

Մնա առավոտ կէլնեն վեր, սադրազամ, վա̈զիր կտիսնան փողյհդերաց հալ:

Էլմ էն օր ժողով կանեն, էն կիտուն մարթեր կպիրեն:

Էն մեյ կիտուն կասի. - Էսա ծեր արածն չէլավ, էն տարողն կիմնա̈:

Սադրազամ կասի. - Իսոր մեյ չարեմ կնդեքյ:

Մեյ կիտնական կասի. - Պերեքյ աղչկներաց ծեռներ ներկ քսեքյ: Ներս մտնելու գյախ թող ուրենց ծեռ զանեն վեր տռան սեմին, սորա մտնեն ներս ուրենց ծեռ լվան, նոր էրթան էօդեն: Առատուն նշան որ տռան վերեն որ տեսանքյ էն տուն մտնենքյ:

Վա̈զիր, սադրա̈զամ ուրենց աղչկներաց ծեռ ներկ կքսեն: Աղչկներացն էլ կթա̈մխեն՝ եփ որ տռնեն ներս կմտնեքյ ծեր ծեռ զա̈րկեքյ վեր տռան, նոր կնա̈ցեքյ ներս, վեր ավուզին լվացվեքյ, էլեքյ վեր:

Իրիկուն Անդոն էլմ կէրթա̈ աղչկներ պիրելու:

Աղչկներ, որ կխասնեն փողնի տռան վերեն, էրկուսն էլ ծեռքյներ կզա̈րնեն վեր տռան, կմտնեն ներս:

Կէրթա̈ն ավուզի մեչ ծեռքյներ կլվան, կէլնեն էօդեն:

Զում արշալույսին Անդոն իդոնց էլմ կտանի մեյ մեկ ուրենց տուն:

Տղին պառկի կքյնի:

Առատուն ա̈նցյա̈ն կակխի քյնուց:

Մենքյ գյանքյ տեխ վա̈զիր, սա̈դրա̈զա̈մ: Կէլնեն դա̈վրեշի խալավ կխայնեն. կէրթա̈ն փողյհտանքյ կֆռան:

Ֆռալով, ֆռալով կէրթա̈ն աղչկներաց նշանած տոտ կկնդնեն:

Տուռ կտփեն, ճարստի տղեն կէլնի փենջարից կիրիշկա տիսնա, որ էրկու խա դա̈վրեշ են:

Ծուտ կէճնի տոտ կպա̈նա: Դա̈վրեշներ ներս կառնի, կտանի ուր սենյակ:

Կասի. - Անդո՛ն, կերակուր պե՛, խաց պե՛. Անդոն, կահվա պե՛: Ծատ իսոնց պատիվ կպախի:

Զում իրիկուն կուտեն, կխմեն: Դավրեշներաց մեկն կասի, թե. - Ախպե՛ր, - կասի, - Էսա Անդոն որ կա՝ ի՞նչ որ ուզես, կպերի՞:

Կասի. - Խա, ընչի՞ չէ, ի՞նչ որ ուզեմ՝ կպերի:

- Դե, աաա, թող մեկ սենյակ իլին ոսկի թո լցի:

Մեյ ժամվան մեջ էօղեմ իլին ոսկի կլցի:

Էլըն դըվրեշներ. որ էրթան, լանն ասաց. - Ծե չեմ թուլնե, էսա կիշեր զի մսաֆր եքյ, չեքյ էրթա:

Չի թող էրթին. կիշեր մնացին էնտեղ:

Սըհաթ իրեքյին ասաց. - Անղո՛ն, վըզիրի աղչիկ, սըդրըզըմի աղչիկ պե ըստեղ:

Անղոն կնաց աղչկներ իպե:

Ասաց. - Անղո՛ն:

Ասաց. - Հրամե:

Ասաց. - Էն ճեռչ դիվանխանե էրկու կառեոլա տիր:

Պատրաստեց:

Դըվրեշներուց ասաց. - Դե՛ էլեքյ, կնացեքյ քյնեքյ:

Կանչեց Անղոն:

Ասաց. - Հրամե:

Ասաց. - Մեկ աղչիկ մեկի մոտ տար, մեյն էլ մեկի մոտ:

Աղչկներ կէրթըն մտնեն ներս: Խերեր կտիսնան:

Սըղրըզըմ վըզիրի իրես կիրիշկի, վըզիր սըղրըզըմին կիրիշկի, տիսնան, որ ուրենց աղչիկներն են:

Մե մեկ իրեն աղչիկ կառնի կպառկի:

Մեկ էլ առատուն կէլնեն վեր կտիսնան աղչիյ-մաղչիյ չկա:

Վըզիր ինըն սըղրըզըմ խորհուրթ կանեն, կասեն. - Ջանմ, իսրա չարեն ի՞նչ պիտի էլնի:

Իսոնքյ ուրենց մտածումի մեչն են: Տղեն կէրթը ինոնց մոտ:

Կասի. - Անղո՛ն, էսա պե, Անղո՛ն, էնա պե:

Վերչ կխարցուցեն էտա տղից, կասեն. - Էս չափ որ քյե էօղեն ոսկի լցեց էսա Անղոն, տյու էլ էսա Անղոն ընչի՞ կպախես մո քյե: Էն սատանայական պըննմ է, քյեզի տժոխքյ կտանի, լավ չի: Իդոր տյուս վոնդի, մենքյ քյե խամար աղչկներ կկնղնենքյ, քյե կփսակենքյ:

Տղեն դըվրեշներաց մտիկ անելով, Անղոնին թողեց պընը:

Ասաց. - Անղոն, կնը, քյե չեմ ուզե:

Դըվրեշի մեյն ասաց. - Մե կանչի Անղոնին՝ խենքյ կնըցե՞, թե չէ:

Տղեն կանչեց. - Անղոն:

Ասաց. - Հրամե, - չէր կնըցե:

Իրեքյ տիր Անղոնին տյուս վոնդեց:

Վերչին տիր Անղոն կնըց:

Էլ էնչափ կանչեց. - Անղո՛ն, Անղո՛ն, - Անղոնի ծեն-ծյուն չկեր, կնաց խետ ուր պըննին:

Դըվրեշներ էլըն ոտքի, կաց պըրեռվ արեցին, ինոնքյ էլ էլըն կնըցին:

Կնըցին խորհուրթ արեցին, էլըն փոլիս ճամխեցին, տղին ծեռ-ոտ կապեցին, ատին էկան:

Իսոր պիտի պատիժ տան:

Մեկն ասաց՝ մափըս անենքյ, մեկն ասաց՝ վիզ զանենքյ, մեկն ասաց՝ կապեքյ ճյուրյում պոչ՝ որ տեղ կտանի, թո տանի: Մեկն էլ ասաց՝ շանմ, ընչի՞ կսպանեքյ, տարեկ տրեքյ մեչ փըչուն, փիսութեն լցեք վերեն, կըխեքյ դըրխի տոնեն:

Պիրին էտ տղեն տրին մեչ փչուն, ապականութեն լցրին վերեն, չում պողչի տակ: Պախապանմ էլ կտնեն վեր տոան, թոխմախմ էլ տրին էնտեղ, բայչուն ասին՝ վո՞վ կընցնի, տառնա էնտեղեն, պիտի առնի էսա թոխմախ զա̈նի մեչ էսա մարթու գլխուն:

Էկան, ընցնող-տառցող թոխմխով, որ կզա̈նեն հնոր գլխուն, էն ուր գլեոխ կմտուցեր մեչ ապականութնին:

Մնաց չում իրիկուն: Սա̈հ̃ար իրեքյ էկավ. էն գյա̈խ փերիհ̃տերաց թակավորն էլմ էկավ կընցներ:

Էտ հ̃արստի տղեն կանչեց. - Փերիյհ̃տերաց թակավոր, իմ Անդոն կուզեմ:

Թակավոր ասաց. - Ես Անդոն տվեր եմ, էլ ի՞նչ կուզես:

Ասաց. - Ես փործ արեցի հնոր, էն փախեր ի իկեր ի:

Պիրին Անդոն տվին էն մարթուն:

Խրատ տվին Անդոնին, ասին ի՞նչ կանդար, որ վեր քյե կպա̈րկանա, տյու մի թոնե գյա:

Տղեն ասաց. - Անդո՛ն:

Ասաց. - Ի՞նչ ի, աղա՛:

Ասաց. - Անդո՛ն, զի ըստեղեն խան, տար հ̃ամամ:

Տղեն կնաց պաղնիս, լավմ լողկցավ, խալվներ խագյավ, կնաց ուր էօղեն:

Ասաց. - Անդո՛ն:

Ասաց. - Հրամե:

Ասաց. - Էն փըչու կչտին ուրիշ փըչիմ էլ կախի, էլմ իլին ապականութնով: Վազիր տիր մեկու մեչ, սադրա̈զամ տիր մեկու մեչ:

Տղեն ուր խացն կերավ, պառկավ, քնավ:

Բայչեն առատուն էլավ վեր, տեսավ որ փըչին էլե էրկու: Անցնող տա̈ռցող որ տեսան էրկու էր, էլմ թոխմախ կվերցեն, որ զա̈նեն:

Մեն կասի՝ ջանմ ես վա̈զիրն եմ, մի՛ զա̈նկե, մեկէլն էլ կասի՝ ջանմ, ես սա̈նդրա̈զա̈մն եմ, մի՛ զա̈րկե:

Ինոնքյ, որ կասեն մենքյ վա̈զիրն ենքյ, մենքյ սա̈նդրա̈զա̈մն ենքյ, զարնողներ մեկ ավիլի կզարնեն:

Կասեն. - Տյու ի՞նչ վա̈զիր, ի՞նչ սա̈նդրա̈զա̈մ ես, որ իկեր ես մտեր ես էսա տեղ:

Ինոնցյ չում իրիկուն սպանվ:ան:

Մենքյ տիսանքյ, թե հ̃արռուստի տղան ի՞նչ կանի:

Իրիկուն խացեն վերչ ասաց. - Անդո՛ն:

Ասաց. - Հրամե:

Ասաց. - Թակավոր պե ըստեղ: Կնա̈ սա̈նդրա̈զա̈մի, վա̈զիրի աղչիկներն էլ պե ըստեղ:

Թակավորն էկավ: Հարստի տղեն ուր գլխի գյացած հնոր պատմեց:

Թակավորն ասաց. - Որ ըդսկնա ի, աղչկներ ճամխի ուրենց տեղ:

Աղչկներ ճամխեց:

- Ջիկ էլ ճամխի, ես առատուն քյե փսակեմ:

Առավոտ թակավոր ինքյ ուր ծեռնով խարսնիս արաց, էն էրկու աղչկներ իտուր էտա տղին:

Էն խասավ ուր մուրազին, տյուն էլ՝ քյոն: